ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար դեղորայք ձեռքբերման նպատակով կազմակերպված ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի փետրվարի 10-ին կնքված N ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/5-5 պայմանագրում 2020 թվականի փետրվարի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ - N ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/5-5 պայմանագրի գնումը կատարվել էր <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդածի 6-րդ կետի համաձայն: ՀՀ առողջապահության նախարարի 23.01.2020 թվականի N 235-Ա հրամանով հաստատվել է ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

Փոփոխության նկարագրություն-Համաձայնագրով հաստատվել է N ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/5-5 պայմանագրի վճարման ժամանակացույցը /հավելված 2/:

Փոփոխության հիմնավորում-Համաձայն ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 18-րդ կետը և N ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/5-5 պայմանագրի 8.15 կետը:

Պատվիրատու՝ ***ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ***